

Կովկասի Տ. Փոխարքան ուղղել է Վեհափառին հետևեալ պատասխան հեռագիրը.


Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

էջմիածին, 8 դեկտեմբերի

Կինս և ես խնդրում ենք Ձերդ Սրբութեան ընդունել մեր սրտագին շնորհակալութիւնը սիրալիր ողջոյնի և բարեացակամ աղօթքների համար:

ԳԵՆԵՐԱԼ ԱԴԻԻՏԱՆՏ

ԿՈՄՍ ՎԱՐԱՆՑՈՎ, ԴԱՇԿՈՎ



ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻԻՆՆԵՐԻՑ.

Դիւանի շրջաբերական գրութիւններ Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի, Աստրախանի և Շամախու Հայոց առաջնորդների, Երևանի փոխ-թեմակալի և Ղարաբաղի թեմի ժամ. կառավարչի անունով, որով յանձնարարուեց յայտնել իրենց թեմերում գտնուած Տաճկահպատակ հայերին, որ Կովկասի Տ. Փոխարքան՝ Նորին Վեհափառութեան միջնորդութեան համաձայն, կարգադրել է, որ փոխարքայութեան սահմաններում եղած Տաճկահպատակ հայերն ազատ են մնալու Ռուս-տաճկական պատերազմի ընթացքում, իսկ Ռուսաստանում եղած Տաճկահպատակ հայերի ազատութեան համար Փոխարքան զիմել է Պետրոգրադի բարձր իշխանութեան, որից, հաւանականաբար, շուտով բաւարար կարգադրութիւն կատարուի: 6 նոյեմբերի, թ. թ. 1712—1716:

Նորին Սրբութեան մակադրութիւն Մ. Տաճարի Լուսարարապետի անունով. «Պատուիրում ենք Մայր Տաճարի Լուսարարապետ զերապատիւ Տ. Անոնդ եպիսկոպոսին տալ ճեմարանի Զ. դասարանի աշակերտ Բենիամին Մանասեանին, Հայկ Դուկասեանին և Միսակ Տէր Վարդանեանին ուրար»: 7 նոյեմբերի, թ. 1718: